

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի համայնքապետարանը տեղեկացնում է, որ 2019 թ. հունիսի 10-ին, ժամը՝ 11:00, Մալիշկայի համայնքապետարանում տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող, Մալիշկայի վարչական տարածքում գտնվող հողի վարձակալության մրցույթ (0.18 հա հողամասը /ծածկագիր 10-032-0038/ նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական, արտադրական հող):
Հասցե՝ գ. Մալիշկա 15-րդ փ. թիվ 85:

Մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի 1 տոկոսի չափով /10000 դրամ/:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է աճուրդի և մրցույթի նախորդող երրորդ օրը, հունիսի 7-ին, ժամը 12.00:

Հայտ կարող են ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրենց հետ կունենան անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը: Հայտի ներկայացման համար անհրաժեշտ է վճարել 500 ՀՀ դրամ տեղական վճար և նախավճար՝ լոտի 5%-ի չափով:

Վճարումը կարող է կատարվել ինչպես կանխիկ՝ Մալիշկայի համայնքապետարանի հաշվապահություն, այնպես էլ անկանխիկ հետևյալ հաշվեհամարին՝

- տեղական վճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355119166 Կենտրոնական գանձապետարան,

-նախավճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355119109 Կենտրոնական գանձապետարան:

Աճուրդում չհաղթած մասնակցին մուծված նախավճարի չափը վերադարձվում է տեղում՝ գրավոր դիմելուց հետո:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել համայնքապետարան, հեռ. (+374)28122084 (Մամվել Այվազյանին):